ՀՀ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ.

Մեկուկես տասնամյակ է անցել «սոցիալիզմի ճամբարի» փլուզումից, բայց հասարակական միտքը դեռևս ընդհանուր հայտարարի չի եկել դրա պատճառների շուրջ: Մի տեսակետ, որ արտասահմանում է տարածված և արտասահմանին գերված «հայրենական» հետազոտողների շրջանում, որ փլուզման միակ պատճառը որոնում է սոցիալիստական համակարգի ներքին հակասությունների մեջ: Նշվում են, օրինակ, «կոմունիստական կայսրության» հսկայական տարածքի տարբեր շրջանների անհավասարաչափ տնտեսական զարգացումը, պատմամշակութային՝ երբեմն «անհամատեղելի» տարբերությունները, բազմազգ երկրում ազգային հարցի «աննորմալ» լուծումները, խորհրդային ղեկավարման քարացած սկզբունքները, որոնք լայնորեն դրսևորվեցին լճացման տարիներին: Մասնավորապես հետխորհրդային երկրներում և, հատկապես, ժողովրդավարացման հետևանքով համեմատաբար ապահով վիճակից ծայր թշվառության մեջ հայտնված հոծ բնակչության շրջանում լայն տարածում ունի այն տեսակետը, թե Խորհրդային Միությունը կործանեց երկրի «վաճառված» ղեկավարությունը: Սրա հավանականությունը մեծանում է նրանով, որ տեղական ու արտասահմանյան լրատվամիջոցներում հրապարակված փաստերը այլ երկրների, գերազանցապես ԱՄՆ-ի գաղտնի ծառայությունների կողմից Միության առաջատար ղեկավարներին հավաքագրելու, սրանց՝ արտասահմանյան բանկերում վիթխարի գումարներ ունենալու, «կասկածելի» հիմնադրամներից ֆինանսավորվելու վերաբերյալ ոչ միայն չէին հերքվում, այլև բոլորովին չէին ազդում «մերկացվածների» գործունեության վրա: Արևմուտքի սիրելի Գորբաչովը, որի բրոշյուրները աստղաբաշխական «հոնորարների» էին արժանանում, ըստ ռուսական՝ կարծես թե հավաստի աղբյուրների, ֆինանսավորվում էր Քիսինջերի ֆոնդից:

Թվում է՝ ճշմարտությունը երկու տեսակետների միասնության մեջ է: Արտաքին ուժերի հրաշալի կազմակերպած դավադիր գործունեությունը անսպասելի (տվյալ պահի համար) հաջողություն ապահովեց Խորհրդային Միության ներքին ակնհայտ հակասությունների և Գորբաչովի, պաշտպանության նախարարի և անվտանգության կոմիտեի նախագահի (հիշենք վերջին երկուսի հետ պատահած «անակնկալները») նույնքան ակնհայտ դավաճանության համադրությամբ: Իսկ փլուզումից քիչ անց ԽՍՀՄ-ի առաջին «պրեզիդենտը» խոստովանելու էր, որ ամբողջ կյանքում ատել է սոցիալիզմը և պայքարել նրա դեմ: Փարիսեցիությունը այլ կերպ չի լինում, իսկ փարիսեցիությունը ժամանակակից աշխարհում ամենից շատ տարածված միջոցն է իրերի իսկական վիճակը խեղաթյուրելու համար:

Հետազոտողները կարծես առանձնակի խորությամբ չեն անդրադառնում մի երրորդ, շատ ավելի վճռական գործոնի, որին Միության փլուզման պատճառների մեջ առաջնային դեր էր վերապահված: Խոսքը տեղեկատվական պատերազմի մասին է, որին կարծես թե անտեղյակ մնաց խորհրդային ղեկավար էլիտան: XX դ.

վերջում մարդկային հասարակությունը թևակոխել էր մի նոր շրջան՝ տեղեկատվական հասարակության շրջան, մինչդեռ բրեժնևյան «ղեկավարությունը» հանգել էր սոցիալիզմի՝ առանց այդ էլ անկատար համակարգը պահածոյացնելու «հայտնությանը»՝ երկիրը դատապարտելով դանդաղ, բայց անխուսափելի կործանման:

Անկախ պատճառներից՝ Խորհրդային Միության փլուզումը պատմական հեռանկարի մեջ օբյեկտիվ, թեև արագացված ընթացք էր՝ բոլոր կայսրությունների տրամաբանական վախճանը: Անտրամաբանականը ժամանակի գործոնն էր: Թվում էր՝ տնտեսական, ռազմական, քարոզչական աննախադեպ կենտրոնացումը սոցիալիզմի ճամբարին դեռևս տասնամյակների գոյություն էր երաշխավորում: Սա է այսօր մեծամասնության կողմից հավանության արժանացած համոզմունքը: Հետխորհրդային զարգացումների բացասական համապատկերը, սակայն, աստիճանաբար լրացնում է մի ուրիշ տեսակետի կողմնակիցների շարքերը, որոնք ակնկալում էին, թե սոցիալիստական համակարգում «վերևներից» ղեկավարվող վերափոխումներով (հանրապետությունների ինքնուրույնության մեծացում, տընտեսության պլանային մամլիչի մեղմացում՝ շուկայական տարրերի ներդրմամբ, կուսակցության միահեծանության և նրա՝ անհեթեթության հասցված գաղափարախոսության թուլացում և այլն), որոնց մասին արդեն ծայր էին առել «լուրջ» խոսակցություններ, կարելի էր պահպանել Միության կառույցը: Նման դեպքերում մատնացույց են անում Չինաստանի օրինակը: Սոցիալիստական համակարգի անուրանալի ձեռքբերումներ-վերափոխումների հետ միասին խորհրդային տարածքի ժողովուրդներին կազատեին այն անմարդկային տառապանքներից, որոնցում հայտնվել էին նրանք՝ «անակնկալ» փլուզման հետևանքով: Այդ ճանապարհով հնարավոր էր ստեղծել «եվրոպական տան» պես մի բան, որին այսօր ձգտում է Արևմուտքը: Բայց դա, հաստատապես կարելի է պնդել, չէր մտնում Միության փլուզումը և գլոբալացումն ուղղորդողների պլանների մեջ, երկրի ղեկավարությունն էլ, անգամ ցանկության դեպքում, ի վիճակի չէր նման վերափոխումների:

Ինչևէ, փլուզումը և «անկախ» հանրապետությունների ձևավորումը պատմական իրողություն են: Վերադարձը, բարեբախտաբար, անհնար է, ներկան դժվար ու որոշ իմաստով՝ անկանխատեսելի, գալիքը՝ լուսավոր-մռայլ հորիզոններից անդին: Ներկան, որ արդեն մեկուկես տասնամյակի պատմություն ունի, բնութագրվում է «անցումային շրջան» եզրով, և տեսաբանների վերլուծություններում, որքան էլ պատմական պահը անսովոր է, զարգացման միտումները՝ մշուշոտ, ստանում է կերպ ու կերպարանք, նույնիսկ «օրինաչափությունների» տեսքով: *Անցումային* անվանում են այն ժամանակը, որն անհրաժեշտ է հասարակական մի կենսաձևից մյուսին անցնելու համար: Այս առումով ամբողջ XX դարը մեզ համար անցումային եղավ՝ կապիտալիզմից սոցիալիզմին և հակառակը: Անցումային, որովհետև 70 տարիներ չհանգեցրին նոր տնտեսության ու հարաբերությունների կայունացման և ուղեկցվեցին… ձևախեղումներով: Եթե արդի շրջանն իսկապես օրինաչափություններ ունի, ապա ամենաբնութագրականն այն է, որ սոցիալիզմից կապիտալիզմին անցումը ևս ազատ չէ «ձևախեղումներից», ավելի ստույգ կլիներ

ասել, թե տնտեսական-հասարակական ձևափոխումները առայժմ ձևախեղումների բնույթ են կրում իրենց պայմանավորած անցանկալի հետևանքներով, բոլոր ոլորտներում:

Դրությունը բարդանում է «արտաքին» տարաբնույթ միջամտություններով ու ազդեցություններով՝ իբրև գլոբալացման հետևանք կամ դրսևորում:

Խորամանկորեն, հազիվ թե դա չգիտակցված քայլ էր, «սոցիալիստական ազգերից» թաքցվեց անցման շրջանի բուն բովանդակությունը: Եթե կարգախոսը լիներ անցում սոցիալիզմից կապիտալիզմին, ապա վերջինիս անսքող մերկացումները նախախորհրդային ազգային ու համաշխարհային գրականությունում, խորհրդային քարոզչության խոր նստվածքների հետ միասին, հազիվ թե գրավիչ դարձնեին հեռանկարը: Դրա համար էլ «ամբողջատիրական» սոցիալիզմից անցումը գունազարդվում էր անկախության, ժողովրդավարության տեսլականով: Ով-ով, բայց համաշխարհային զարգացումներն ուղղորդող ուղեղ-կենտրոնները լավ գիտեին, որ XX դ. վերջում գլոբալ ընթացքները և Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՄՆ-ի աշխարհակալական նկրտումների՝ հաղթահարելի արգելքներով իրականացումը նորաթուխ անկախություններին կանգնեցնելու էին բոլորովին նոր, իսկապես անկանխատեսելի իրողությունների առջև՝ անկախության աստիճանական սահմանափակումից (ինքնանկախ պետությունների զանազանաբնույթ միավորումներ՝ բլոկներ, միություններ, «ութնյակներ», միջպետական վերազգային կորպորացիաներ) մինչև ազգային պետությունը գլոբալացումամերիկացում գործընթացին ծառայեցնելու գործիք դարձնելը: Իսկ հետխորհրդային հանրապետություններում, ընդհանրապես ժողովրդավարական ավանդույթներ չունեցող երկրներում, ժողովրդավարության «ներդրումը» հիշյալ հանրապետություններն ու երկրները կայացած ժողովրդավարություններից, ամենից առաջ՝ ԱՄՆ-ից գաղութային կախման մեջ գցելու ամենակարճ ճանապարհն է: Նրանք, ովքեր չեն ենթարկվի խաղի կանոններին, կարժանանան Հարավսլավիայի, Աֆղանստանի, Իրաքի, Վրաստանի, Ուկրաինայի ճակատագրին: Ահա այսպիսի «անկախություն» և «ժողովրդավարություն»:

Հանրահայտ ճշմարտություն է՝ «բարեփոխումները» դատապարտված են ձախողման, եթե նախապատրաստված և հիմնավորված չեն գիտականորեն, ոչ միայն աշխարհի փորձի, այլև տվյալ ազգային ինքնության, հասարակական-տնտեսական, պատմամշակութային յուրահատկությունների հաշվառմամբ: Խորհրդային Միության փլուզումը, որքան էլ ակնկալելի, այնուհանդերձ, անակնկալ եղավ և մտածելու, խորհելու ժամանակ չկար, ասում են մեր «ռեֆորմատորները»: Բայց «հնի» դեմ պայքարի ելնողները պետք է զինված լինեն «նորի» տեսությամբ, առարկում են ընդդիմախոսները: Ինչ է՝ չգիտե՞ն, որ իշխանություն նվաճելը ավելի հեշտ է, քան նոր հասարակություն կերտելը: Խորհրդային բուհերում բարձր առաջադիմությամբ սովորած «ռեֆորմատորները» անտեղյա՞կ էին այս պարզ ճշմարտությանը, որը մատուցվում էր մի քանի դասընթացներում:

«Իշխանության մղվող տղաները», որ շարժման ՀՀՇ-ական առաջնորդներն էին, կա՛մ պետք է դիմեին Միությունում «շարժումներ» հրահրող արևմտյան «խորհրդականներին» կա՛մ ապավինեին սեփական գրրքային «իմաստությանը»:

Արևմտյան որոշ տեսաբաններ անցման շրջանի վերափոխումների կոպիտ վրիպում են համարում շուկայական հարաբերությունների և ժողովրդավարության դժվարին ընթացքից ազգային ինքնության ու տնտեսության առանձնահատկությունների դուրսնետումը, որին այնպես հետամուտ էր նորանկախ հանրապետության առաջին վարչակազմը: Միահամուռ ժխտվում էր ազգայինը՝ գաղափարախոսությունից մինչև տնտեսություն կամ հակառակը: Արդյունաբերության «վաուչերային» սեփականաշնորհումը համաժողովրդական սեփականությունը թալանելու ամենացինիկ արտահայտություններից էր: Իսկ հողի սեփականաշնորհման «բարեփոխումը», որ, ի դեպ, առաջինն էր հետխորհրդային տարածքում (դարձյալ առաջինը), իրականացման գործընթացով գյուղի կոլեկտիվացման ստալինյան փորձի կրկնությունն էր՝ հակառակ ուղղությամբ: Բնականաբար, հետևանքներն էլ նույնը եղան: Համենայն դեպս, Հայաստանի՝ նախկինում մշակովի տարածքների 50%-ը այժմ չի մշակվում, և դա՝ հողասակավ հանրապետությունում: Իսկ մշակովի տարածքներում վերականգնվել են աշխատանքի նախնադարյան եղանակները… 2000 թվի սահմանագծում սեփականաշնորհված հողամասերում աշխատում են ամբողջ ընտանիքով, ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքի՝ 93,8 %-ը:

Իրավացի է հետազոտողը. «Արդիականացման բոլոր սխեմաները փոխ են առնվել Արևմուտքից և փոխադրվել հայկական իրականություն՝ առանց տեղական պայմաններին ինչ-որ չափով գիտական հարմարեցման: Դրա համար էլ արդիականացման ձախողումը նախապես ծրագրավորված էր: Այն տեղադրված էր վերափոխումնեհջ հենց բնույթի, մեթոդների և մարտավարության մեջ, որոնք անտեսում էին հայոց հասարակական փորձառության յուրահատկությունները»[1]:

Տեսաբանները իրավացիորեն նկատում են, թե արևմտյան «մոդելները» հետխորհրդային տարածքում չէին կարող շատ արդյունավետ լինել, որովհետև կառուցված էին հասարակական բնականոն զարգացումների հաշվառմամբ: Այդ երկրներից ոչ մեկին ծանոթ չէր անցումը սոցիալիզմից կապիտալիզմին: Սա պատմական շատ ուրույն փորձ էր՝ կարոտ գիտական նոր մոտեցումների ու իմաստավորման, նորովի լուծումների: Նույնիսկ սոցճամբարի եվրոպական, ներառյալ՝ մերձբալթյան երկրների փորձը չէր կարող անխափան գործել, ասենք, խորհրդային տարածքի սլավոնական, անդրկովկասյան և միջինասիական երկրներում, որովհետև սրանք իրարից շատ տարբեր են ոչ միայն պատմությամբ ու ազգային-կրոնական առանձնահատկություններով, այլև 70 տարիների ընթացքում «խորհրդային» դառնալու մակարդակով:

Խորհրդային տարածքներում հետխորհրդային զարգացումների վրա շարունակում է վճռական ազդեցություն թողնել գլոբալացումը, որը, Բուշ կրտսերի վարչակազմի ջանքերով, նույնանում է ամերիկացման հետ՝ օրըստօրե ստվարացնելով ԱՄՆ-ի հակառակորդների և թշնամիների շարքերը:

Վերափոխումների ընթացքը գիտականորեն հիմնավորելու և ազգային յուրահատկությունները հաշվի առնելու ճիգերը, որ նկատվում էին 90-ականի

[1] **Погосян Г. А.,** *Армянское обшество в трансформации, Е., 2003, с., 417-418.*

վերջերին, նկատելիորեն տեղի են տալիս Համաշխարհային բանկի և այլ միջազգային ու «ազգային» կազմակերպությունների «գրոհների» առջև: Սփյուռքում ակնհայտ «նահանջը՝ առանց երգի» կրկնվում է Հայրենիքում: Ընդհանրապես, Հայրենիքի սփյուռքացումը այն սպառնալիքներից է, որը արտասահմանում ապրող մեր հայրենակիցներին զգուշության է մղում: Բայց այս պահին խոսքը այլ նահանջի մասին է: Զուգահեռը 20-30-ական թվականների հետ, իհարկե, էական տարբերություններով, ծնունդ է առնում ինքնաբերաբար: Այն ժամանակ էլ ժողովուրդը հայտնվել էր սոցիալական թշվառության մեջ, և նրան կերակրում էին գալիք երջանկության հեռանկարով: Տարբերությունն այն է, որ այն ժամանակ հավատը հեռանկարի հանդեպ համընդհանուր էր, հակառակ այժմյան հուսահատության, որ կրկին համընդհանուր է: Ժողովուրդը հավատում էր սոցիալիզմի գաղափարին, և սա իմաստավորում էր նրա զոհողությունները: Մինչդեռ անկախության ու ժողովրդավարության կարգախոսները, որոնցով «դեմոկրատները» ժողովրդին գրոհի տարան իսկապես «տոտալիտար» հասարակարգի դեմ, վաղուց կորցրել են իրենց գրավչությունը: Խորհրդային շրջանի ձեռքբերումների կորուստը, սոցիալական խիստ անբնական բևեռացումը՝ իբրև հետևանք արագացված սեփականաշնորհման, որի ընթացքում համաժողովրդական, համենայն դեպս ժողովրդի նվազագույն պահանջմունքները բավարարող սեփականությունը կենտրոնացավ մի բուռ «օլիգարխների» և բարձր իշխանավորների ձեռքում, աղքատության աննախադեպ աճը, արտագաղթը, անպաշտպանվածության խորացող զգացումը փշրում են վերափոխումների նկատմամբ հույսերը: Գիտակցությունն առաջ էր ընկել կեցությունից, և վերջինս դաժանորեն պատժում է նրան. հուսանք՝ առժամապես: Ոչ պակաս նշանակություն ուներ և այն, որ ղեկավարության կենսամակարդակը էական տարբերություն չուներ ընդհանուրի սոցիալական դրությունից: Այդպես էր Առաջին հանրապետության օրոք ևս: «Հավասարակշռությունը» խախտվեց բրեժնևյան «լճացման» տարիներին՝ մեր օրերում աստղաբաշխական չափերի հասնելու համար: Եվ առարկությունը «ճոխ սեղանից» օգտվող «վերևների» և սեղանի փշրանքներից անգամ զրկված «ներքևների» վիճակի համար դժգոհողներին (Վ. Սիրադեղյան, «Սա «հայի բախտ» չի, այլ հայի խելք», «Երկիր ցպահանջ», Ե., 2005, էջ 191-196), անկախ նրանից՝ լուրջ տոնով է արտահայտված, թե քաղաքական ցինիզմի դասական օրինակով, խարխլում է իրադրությունը գեթ հեռանկարում շտկելու հույսը:

Վերափոխումների ընթացքին գլոբալ զարգացումների ուղղակի և միջնորդավորված միջամտության հետևանքներից մեկը հանրապետությունների տնտեսությունների փոշիացումն էր, որը հայկական գյուղերում, օրինակ, վերածնեց արորի ու «եզո ջան»-ի ավանդական պատկերները: Բոլոր մակարդակների «Ադամ Սմիթ»-ների «մեկնաբանությունները»՝ խորհրդային տեխնոլոգիաների հնացածության և արտադրանքի անմրցակցային որակի մասին ճշմարտության չնչին մաս ունեն. թալանից ու մետաղի ջարդոնի տեղ վաճառքից հրաշքով փրկված «հնացած» տեխնոլոգիաներով գործարաններից մի քանիսը գործի գցվեցին՝ սկզբում հենց եղած սարքավորումներով, հետո հայտնի չէ, թե գինեգործության ու պահածոյացման գործարանները ինչու կրկին մետաղի

ջարդոնի տեսքով ուղևորվեցին հարևան երկրներ՝ պետական այրերի հարազատների ու անձնական սեփականատերերի գրպանները լցնելու «առաքելությամբ»: Մեկուկես տասնամյակը հաստատում է, որ գլոբալացումը ազգային տնտեսությունների անհաշտ թշնամին է:

Ժողովրդավարության, մարդու իրավունքների և այլ կարգախոսներ նախնական կուտակման դաժան մթնոլորտում կորցրել են իրենց համամարդկային բովանդակությունը: Շահույթի հետամտումը, օրվա հացի համար դժվարին վազքը, գործազրկության աճը, հայրենի օջախը լքելու հրամայականը, անպաշտպանվածության զգացումը տեղ չեն թողնում արևմտյան այն արժեքների համար, որոնցով փորձում են փոխարինել անցյալ դարձած արժեքները: Մարդիկ բնական կարոտով են հիշում երեկվա ապահով կյանքը, պաշտպանվածությունը օրենքով և հավասարությունը օրենքի առջև, վստահությունը վաղվա հանդեպ: Անհատն այնքան անապահով ու անպաշտպան է մեր օրերում, որքան երբեք: Եվ այսպես է ամբողջ հետխորհրդային տարածքում, թերևս մերձբալթյան երկրների բացառությամբ: Համենայն դեպս՝ մեկուկես տասնամյակը դեռևս «աշխատում է» սոցիալիստական համակարգի օգտին: Եվ դա անգամ արդի անուրանալի ձեռքբերումները հաշվի առնելու դեպքում:

Այս համատարած թշվառության ու հուսաբեկության մեջ պետք է որոնել այն համընդհանուր անտարբերության պատճառը, որ ցուցաբերում են ժողովրդական լայն զանգվածները թե՛ իշխանությունների, թե՛ ընդդիմության նկատմամբ: Իսկ քաղաքականության մեջ (գուցե անձնական կյանքում ևս) իրենց ձախողումները որոշ «քաղաքական» գործիչներ բացատրում են իբրև ժողովրդավարությանը ժողովրդի «անպատրաստ» լինելով՝ ստանձնելով նրա դաստիարակի դերը, չզգալով իրենց դրության կոմիզմը: Մի որոշ իմաստով այս զարգացումները անխուսափելի են: Կոլեկտիվիզմի ոգով ձևավորված խորհրդային «մոդելներին» փոխարինելու են եկել այնպիսի կառույցներ, որոնց հիմքում անհատն է, անհատապաշտությունը: Մարդու միայնակության խնդիրը, որ ժամանակների գրականության ու մշակույթի ողբերգական թեման է եղել, թաքնված է կապիտալիզմի բնույթի մեջ: Բայց երբ «ռեֆորմատորների» ապաշնորհության պատճառով, սա լավագույն դեպքում, որովհետև պատճառը կարող է նաև «պատվեր» կատարելը լինել, անհատը զրկվում է ինքնադրսևորման, ինքնահաստատման հնարավորությունից, դա արդեն նշանակում է, թե անցման գործառույթը ձախողվում է, որ միևնույն է, թե գլոբալացումը հաղթանակում է: Անցումային շրջանի խեղված ընթացքը իր որոշակի կնիքն է դնում հոգևոր ոլորտների, այդ թվում՝ նաև ԶԼՄ-ի գործունեության վրա:

Ժամանակակից ժուռնալիստիկան անցումային շրջան է ապրում երկու առումով. երկիրը հայտնվել է սոցիալիզմից կապիտալիզմին վերադառնալու պարտադրված գործընթացում՝ հոգևոր մյուս բնագավառների հետ անցումային իրողություններ պարտադրելով ԶԼՄ-ին ևս, այնուհետև՝ ամբողջ աշխարհում ԶԼՄ-ը հայտնվել է գլոբալ վերափոխումների հորձանուտում, որի տրամաբանությունը նորից անցումն է, անցում «սովորական» տեղեկատվությունից դեպի գլոբալ զանգվածային լրատվություն: Բնորոշ առանձնահատկությունն այն է, որ լրատ-

վամիջոցների համաշխարհայնացումը իր տրամաբանությունն է թելադրում ոչ միայն անցումային շրջանում հայտնված երկրների լրատվամիջոցների զարգացման ընթացքին: Սա է այն գլխավոր շարժիչ ուժը, որը հետխորհրդային և համաշխարհային լրատվական դաշտերի էական տարբերությունների կողքին հայտնաբերում է նաև որոշակի ընդհանրություններ: Այս պայմաններում օրակարգային հարց է դառնում ԶԼ միջոցների գլոբալ և տեղական զարգացումների, նրանց փոխհարաբերության ուսումնասիրությունը: Տարածված տեսակետ է, թե գլոբալացումը միտված է ինքնությունների համահարթեցման, և սա ճիշտ է, բայց ճշմարտության կեսն է: Մյուս կեսն այն է, որ նույն գլոբալացումն օժտված է նաև ինքնությունները պահպանելու, նույնիսկ զարգացնելու հատկություններով ևս, միայն թե դրանք պետք է ճանաչել և օգտվել դրանցից: Չվիճարկելով խնդիրը՝ շեշտենք, որ նույն ինտերնետը լայն հնարավորություն է տալիս մի հարկի տակ համախմբելու ոչ միայն Հայաստանի տարբեր շրջանները, այլև տարբեր աշխարհամասերում բնակվող հայերին: Մինչդեռ մենք դեռևս ինտերնետային միասնական ուղղագրություն չենք ձևավորել: Հայկական լուրջ ու ներկայանալի ինտերնետային մի կայք օգտակար կլիներ մեզանով հետաքրքրվող այլ ազգերի համար ևս:

Խնդրին յուրահատկություն է հաղորդում այն, որ գլոբալացումն ամերիկյան հանդերձանքով է հանդես գալիս՝ ազգային հատկանիշները համահարթելու, ամբողջ աշխարհին ԱՄՆ-ի «կենսական շահերի» տարածք հայտարարելու սպառնալիքներով: Ռուսական ժուռնալիստիկայի նշանավոր հայրերից Ռ. Զասուրսկին մերժում է գլոբալացումն ամերիկանացում դիտարկող հայացքը այն տրամաբանությամբ, թե «գլոբալացումը հնարավորություն է տալիս ինտերնետում ստեղծել ոչ միայն ամերիկյան տեղեկատվական ցանց», այլև ցանկացած ժողովրդի «վիրտուալ կայսրություն»[2]: Սա միանգամայն ճշմարիտ է: Բայց ամերիկյան գերակայությունները ոչ միայն տեղեկատվական դաշտում, այլև հաղորդակցության մյուս ոլորտներում ապահովում են Ամերիկայի առաջնայնությունն ու գերիշխանությունը, որը պարտադրում է խաղի կանոններ, ամերիկյան կանոններ: Անվանի հետազոտողը չէ՞ որ չի ժխտում, թե արդի տեղեկատվական միջոցները տարբեր երկրներում, նույնիսկ նույն երկրի տարբեր հատվածներում անհամաչափ են զարգանում:

Անցման շրջանում լրատվամիջոցների կրած փոփոխությունները մեզանում քննվում են կապիտալիզմ (սոցիալիզմ, ազատ մամուլ) անազատ մամուլ պարզունակ հակադրության մեթոդով: Հակադրություն, անշուշտ, կա, և դա անցումային շրջանի տեղեկատվական դաշտի յուրահատկություններից է: Սակայն հակադրությունը, որքան էլ վճռորոշ լինի նրա դերը, չի սպառում զարգացման ամբողջականությունը, իսկ անցյալն ու ներկան ընդամենը հակադիր գույնով ներկելը աղքատացնում, որոշակի խնդիրներում նույնիսկ ծուռ հայելու մեջ է ներկայացնում համապատկերը: Չպետք է մոռանալ նաև, որ անցումային շրջանի հաջողությունների ու կորուստների ընթացքը հատուկ է ԶԼՄ-ին ևս, մինչդեռ անհարկի

[2] Засурский Р., *Искушение свободой, М., 2004, с. 242.*

ոգևորությունը անհարկի էլ ուռճացնում է ձեռքբերումները՝ սրանց արհեստական ստվերի մեջ փորձելով թաքցնել նահանջները:

Խորհրդային շրջանի վերաբերյալ ծայրահեղ ժխտական հայացքը շարունակում է «սառը պատերազմի» իներցիան, մինչդեռ վաղուց ժամանակն է ժխտման լիցքերով հագեցած կիրքը փոխարինել գիտական սթափ վերլուծությամբ, անցյալի ու ներկայի գիտական իմաստավորմամբ:

Դժվար չէ նկատել, որ հակախորհրդային քարոզչությունը շատ դեպքերում փոխարինվեց հակառուսական հիստերիայով, հօգուտ նոր կողմնորոշումների, որը, որքան էլ զարմանալի լինի, առավել սուր և հետևողական դրսևորում է ստանում հենց ...Ռուսաստանում: Մեզանում բավական բուռն սկսված հակառուսական մտայնությունը մեր օրերում բավական չափավոր բնույթ է ստացել: Տարօրինակ է, բայց փաստ՝ մեզանում հակասական տրամադրությունները հիմնականում սնվում են Հայաստանի նկատմամբ ռուսական քաղաքականությամբ. տպավորություն է ստեղծվում, թե արվում է ամեն ինչ՝ հայերի ու ռուսների միջև անջրպետ ստեղծելու:

Ժամանակակից տեղեկատվական աշխարհը բավական բազմակերպ է. ԱՄՆ-ում այն «կոմերցիոն» է, Եվրոպայում՝ գերազանցապես հասարակական-առևտրային, պետական լրատվամիջոցները դեռևս շարունակում են իրենց գոյությունը (Չինաստան), զարմանալիորեն անտեսվում է Եվրոպայի փրկարար Արևելքի (Հնդկաստան, Ճապոնիա) փորձը: Այս ընդհանուր մոդելները տարբեր երկրներում տարբեր հատկանիշներ են ձեռք բերում՝ կապված տվյալ երկրի պատմության, ազգային մշակույթի, այդ թվում՝ հենց ԶԼՄ-ի յուրահատկությունների հետ: «Անհրաժեշտ է ԶԼՄ-ի տարբեր ժողովրդավարական հայեցակարգերի և մշակույթների երկխոսություն, բայց բազմակարծ ժողովրդավարական հանրության շրջանակներում նման երկխոսություն դեռևս չի ծագել»[3]:

Ո՞ր մոդելին է հետևում Հայաստանը: Առաջին տպավորությունն այն է, թե ոչ մի մոդելի էլ չի հետևում: Հայկական լրատվամիջոցները հավակնում են ազատ և անկախ կոչվելու: Իրականում ամեն ինչ լուծվում է «մամուլի ազատություն»՝ մինչև վերջ չհասկացված բանաձևով, մինչև վերջ չհասկացված թեկուզ այն պատճառով, որ Արևմուտքում շրջանառվող «մամուլի ազատություն և պատասխանատվություն» կապակցությունից համառորեն անջատում են «պատասխանատվություն»-ը՝ դուռ բացելով ազատությունը ամենաթողությամբ փոխարինելու հնարավորության առջև, որը անկախ մամուլի կայացմանը այնքան կարող է նպաստել, որքան... գրաքննությունը:

Անցման շրջանը զուրկ է տնտեսական հստակ ծրագրից, այդպիսին է նաև լրատվամիջոցների զարգացման ընթացքը: Սա բոլորովին էլ չի նշանակում, թե զարգացումը միտումներ չի դրսևորում: Որքան էլ ավելի շատ են վկայակոչվում ամերիկյան փորձն ու օրենսդրությունը, զարգացման հետագիծը ավելի շուտ հակված է դեպի եվրոպական կառույցը:

---

[3] **Засурский Р.,** նշվ. աշխ., էջ 239:

Գլոբալացումը խոր հետք է թողնում կյանքի բոլոր ոլորտներում, տեղեկատվության վրա ևս, և վերջինս այլևս անհնար է քննել գլոբալ գործընթացներից կտրված: Անցման շրջանի ժուռնալիստիկայի լուծում պահանջող խնդիրներից է արդի տեխնոլոգիաների օգտագործման կարգավորումը: Թեև կառավարությունը այս ոլորտը առաջնային է հայտարարել, Հայաստանը ներկայացնողները նույնիսկ մրցանակներ են շահում միջազգային «ֆորումներում», խնդիրը բավարար ուշադրության չի արժանանում: Համակարգչային, հեռախոսային, ինտերնետային հնարավորությունների օգտագործմամբ տարածաշրջանում հեռու ենք առաջնային տեղեր գրավելուց:

Ռուսական մամուլի հետխորհրդային շրջանը հետազոտողները նշում են հետաքրքիր մի օրինաչափություն. այստեղ ազգային տեղեկատվության գլոբալացումը ուղեկցվում է գլոբալ տեղեկատվության ազգայնացմամբ[4]: Այս հետաքրքիր ընթացքը գրավական է, թե ռուսական ԶԼՄ-ը ամբողջովին չի ենթարկվի գլոբալիզացիայի հակաազգային ընթացքներին: Հայոց տեղեկատվական դաշտը առայժմ նահանջում է աշխարհաքաղաքականացման առջև, մի բան, որ հակասում է մշակութային ներթափանցումների հանդեպ հայկական մտքի սթափ վերաբերումներին անցյալ գլոբալացումների փորձի համապատկերում: Հուսանք՝ սա ժամանակավոր նահանջ է: Որքան էլ տեղական ու «միջազգային» որոշ տեսաբաններ քարոզեն հրաժարում ազգային ինքնությունից, նույն Արևմուտքը, հիմնականում բազմամշակութային համագործակցության ջատագով Եվրոպան, գնալով ավելի ու ավելի է հակվում որևէ ոլորտի վերափոխումների ժամանակ ազգային կենսունակ ավանդույթների հետ հաշվի նստելու տեսակետին:

Ժուռնալիստիկան եղել և մնում է մարդկային մտքի վրա ազդելու հզոր միջոց: Խորհրդային մամուլի ամբողջատիրական բնույթը դրսևորվում էր նրանում, որ այլընտրանքային տեղեկատվության բացակայության պայմաններում իր տեղեկատվությունը ազդեցության կարգավիճակը դարձնում էր «ճնշման» միջոց: Ազդեցությունն ու ճնշումը շատ էլ չեն տարբերվում իրարից, բացի այդ՝ ժամանակակից «ինտերնացիոնալ» լրատվամիջոցները (Բի-Բի-Սի, Ռոյթեր և այլն), առաջինը հաղորդելով տեղեկատվություն, և՛ ճնշում են գործադրում, և՛ պարտադրում են հաղորդման մեթոդները:

Խորհրդային շրջանում էլ էին օրենքներ ընդունվում մամուլի մասին, բայց լրատվամիջոցների իսկական տերը կուսակցությունն էր, որն էլ պայմանավորում էր ԶԼՄ-ի կառույցի ուղղահայաց բնույթը: Անցման շրջանը բնութագրվում է լրատվական գործունեությունը իրավական դաշտ փոխադրելու ջանքերով: Ամեն ինչ չէ, որ հարթ է այստեղ. զանազան պատճառներով, որոնց մեջ առաջնայինը տնտեսականն է, «ուղղահայաց» կառավարումը լրիվ չի հաղթահարվել: Հեռուստաընկերությունները սպառնալից չափերով ու արագությամբ մոտենում են խորհրդային համակարգին՝ մեկ կենտրոնից, այն էլ՝ կառավարական կենտրոնից ուղղորդվելու եղանակին, ինչ վերաբերում է տպագիր մամուլին, ապա այստեղ ևս կախումը չի հաղթահարված, բայց տարբեր են ստվերային տերերը, և դա որոշակի

[4] Տե՛ս **Рантанен Т.,** *Глобальное и национальное, М., 2004, с. 11.*

չափով ապահովում է բազմակարծություն: Այս ընթացքը զարգացման փուլեր անցավ. վերակառուցման ու բացախոսության իներցիան, Արցախյան շարժման հետ միասին, լուրջ ճեղքվածքներ բացեցին 1985-1990 թթ. խորհրդային մամուլի համակարգում, որի իներցիան օրինաչափության ուժ ստացավ արդեն 1991-1994 թթ.: Այս տարիները հայկական մամուլի զարթոնքի, ինքնուրույն ուժի վերածվելու տարիներ են: Այնուհետև սկսվելու էր նահանջի գործընթաց, որը շարունակվում է մինչև օրս: Այս շրջանում ևս ստեղծվում են մասնավոր (կոմերցիոն) թերթեր, ամսագրեր, պարբերականներ, նույնիսկ կուսակցական մամուլը («Ուրբաթ», «Հայք» և ուրիշներ) օժտվում է ազատ խոսքի այնպիսի հատկություններով, որ հավակնում է իրեն վերագրել ազատ մամուլի դերակատարություն:

1994-ի դեկտեմբերի հարվածը ծանր տարան լրատվամիջոցները: Համենայն դեպս, նկատվեց նահանջի միտում. լրատվամիջոցները զգալիորեն թուլացրին տեղեկատվություն տալու գործառույթը՝ վերադառնալով քարոզչության միջոցներ լինելու դերակատարության: Այս ընթացքը, վերադարձի մասնակի ու կարճատև դրսևորումներով, գնալով ավելի խորացավ՝ ձևավորելով այսօրվա մեր լրատվական դաշտը:

Արդի տեղեկատվական դաշտում երկու միտում է նկատվում: Նոր մամուլի ձևավորման շրջանում այն տպավորությունն էր իշխում, թե ընդդիմադիր մամուլը ավելի համախմբված է: «Եթե կողմնակի միջամտություններ չլինեն, առաջինը հավանաբար կհամախմբվեն նախկինները, նախկինամետներ, նախկինամերձ լրատվամիջոցները»[5]: Գուշակությունը չիրականացավ, ընդդիմությունը մեզանում գնալով դարձավ ավելի ու ավելի անկազմակերպ, մինչդեռ իշխանական ցաքուցրիվ «ռեսուրսները» համախմբվելու և կազմակերպվելու միտումներ ձեռք բերեցին: Մի ուրիշ առանձնահատկություն՝ տեղի ունեցավ տնտեսական և քաղաքական իշխանությունների սերտաճում, որի հետևանքով ֆինանսական հզորությունների՝ լրատվամիջոցների վրա ունեցած ազդեցությունը անթաքույց իշխանամետություն դրսևորեց: Մյուս միտումը՝ մեզանում ևս լրատվական «կորպորացիայի» ձևավորման ցայտուն հատկանիշներ են դրսևորվում. «Արմենիա» «կորպորացիան» ունի երեք հեռուստաալիք, ռադիոալիք, տպագիր մամուլ: Արտասահմանյան, մասնավորաբար ամերիկյան փորձը տեղեկատվական և տնտեսական հզորությունների միավորման դասական օրինակներ են տալիս, ավելին՝ տեղեկատվական կորպորացիաներն ունեն տնտեսական հզորություններ, տնտեսականները՝ իրենց լրատվական միջոցները: Ի դեպ՝ այս գործընթացներն ընդհանուր են հետխորհրդային ամբողջ տարածքի համար:

Վաղուց հայտնաբերված և ուսումնասիրված են քաղաքացիական հասարակության ձևավորման գործում ԶԼՄ-ի դերն ու նշանակությունը: Սրանք սերտորեն կապված են իրար, և մեկը պայմանավորում է մյուսի գոյությունը: Մեզանում քաղաքական-հասարակական կազմակերպությունների թուլությունը, սրանով պայմանավորված ակտիվ հասարակության բացակայությունը մեր լրագրողական «կորպուսը» օրինակելի եռանդով բացատրում է իշխանությունների

[5] **Անանյան Գ.,** Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Ե., 2001, էջ 9:

ոչ արդյունավետ գործունեությամբ՝ մոռացության տալով սեփական դերակատարության կարևորությունը: Ուրիշների մեղքի հայտնաբերումը ավելի արդյունավետ ներգործություն է ապահովում, եթե հայտնաբերողն ինքը անմասնակից է այդ մեղքին: Մինչդեռ հայտնի է այն վիթխարի դերը, որ քաղաքացիական հասարակության ստեղծման գործում վերապահվում է լրատվամիջոցներին՝ անկախ նրանից՝ «ավանդակա՞ն», թե՞ «արդիական» են նրանք: Ամբողջովին քաղաքականացված, մեկ՝ իշխանական, մեկ՝ հակաիշխանական ուղղությամբ գործող տեղեկատվական միջոցները, որպիսիք են հայկական ժամանակակից տպագիր ու էլեկտրոնային տեղեկատվության ներկայացուցիչները, քաղաքացիական հասարակության կայացմանը ոչ միայն չեն նպաստում, այլև խանգարում են:

Ժամանակակից հայկական մամուլի ազատության և անկախության մասին զրույցները արևելյան հեքիաթի ժանրին են պատկանում: Մամուլն այն դեպքում է ազատ, երբ ի վիճակի է հասարակությանը վստահելի տեղեկատվություն փոխանցել կառավարության գործունեության մասին, մինչդեռ մեր լրատվամիջոցները իրենք են հաշվետու կառավարությանը, ընդդիմությանը, ֆինանսական հզորություններին՝ իրենց գործունեության վերաբերյալ:

Լրատվությունը հանրությանը հասցնելու գործում մեր անցումային շրջանի ձեռքբերումներից մեկը նորագույն տեխնոլոգիաների օգտագործումն է, նահանջը՝ լրատվությունը հանրապետության բոլոր տարածքներում հավասարաչափ տարածելու անկարողությունը: Խորհրդային շրջանում լրատվությունը, թեկուզ միայն խորհրդային լրատվությունը, թերթերով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ ամենահեռավոր բնակավայրեր էր հասնում: Այսօր մարզերում մայրաքաղաքային թերթեր չեն կարդում (նույնիսկ մարզկենտրոններում), անհամեմատ կրճատվել է ռադիոյից և հեռուստատեսությունից օգտվողների թիվը: Խախտվել է նաև, նախկին տերմինով, «տեղական մամուլի» գործունեությունը: Խորհրդային բոլոր շրջանները և մեծ քաղաքներն ունեին իրենց թերթերը, ռադիոն, նույնիսկ հեռուստատեսային եթերի ժամեր: Այժմ մատների վրա կարելի է հաշվել մարզային, քաղաքային հրատարակություններ: Հեռուստառադիո կայանները կարծես քանակով ավելացել են, բայց բոլորն էլ կախման մեջ են մարզային ղեկավարությունից կամ տեղական մակարդակի տնտեսական «բոսերից», ըստ որում՝ տասնապատիկ անգամ ավելի, քանի նախկինում էր:

Նկատելիորեն փոխվել է էլեկտրոնային և տպագիր լրատվամիջոցների նկատմամբ հետաքրքրության հարաբերությունը: Օրեցօր նվազում է թերթ ու ամսագիր կարդացողների թիվը, հակառակ նրանց անվանումների ավելացման, իբրև հետևանք աստիճանաբար պակասեցնելով նրանց տպաքանակները: Խորհրդային մամուլի վիթխարի տպաքանակներին փոխարինելու են եկել անցման շրջանի՝ անցյալի համեմատությամբ ծիծաղելի տպաքանակները: Որքան էլ «երանելի» ժամանակների «տիրաժների» մի զգալի մասը պարտադրանք ու հարկադրանք լիներ (կոմունիստները «Պրավդա» և «Խորհրդային Հայաստան» պետք է գրվեին, կոմերիտականները՝ «Կոմսոմոլսկայա պրավդա» և «Ավանգարդ», խորհրդային աշխատողները՝ “*Известия* ” բաժանորդագրությունը պարտադիր էր հիմնարկ-ձեռնարկությունների համար ևս), այնուամենայնիվ, գաղտնիք չէ, որ

խորհրդային հանրությունը աշխարհի ամենից շատ կարդացող հանրություններից էր: Հայերս առաջին շարքերում էինք: Այսօրվա չնչին տպաքանակները ոչ միայն հանրության բացարձակ մեծամասնության սոցիալական թշվառության հետևանք են, այլև արդյունք այն քամահրական վերաբերմունքի, որ շուկայական հարաբերությունները ցուցաբերում են գիտունի ու կրթվածի, ընդհանրապես գիտության ու կրթության հանդեպ: Սա անցման շրջանի ԶԼՄ-ի լուրջ խընդիրներից է, որի լուծումը ավելի քան լուրջ համակարգային մոտեցումներ է պահանջում:

Պատճառներից մեկն էլ էլեկտրոնային ժուռնալիստիկան է, որն իր մատչելիությամբ, ընդգրկման անսահմանափակությամբ և այլ արժանիքներով երկրորդ պլան է մղում տպագրականը: Համենայն դեպս փորձագետների վկայությամբ ամբողջ աշխարհում նկատվում է տպագիր մամուլի տպաքանակի և ընթերցողների թվի անկում: Ահա թե ինչու տպագիր մամուլը փորձում է էլեկտրոնային կերպարանք առնել: Բազմաթիվ թերթեր («Ազգ», «Առավոտ», ...) ունեն ինտերնետային տարբերակներ, որը անհամեմատ մեծացնում է լսարանը. վերջինս լայնանում է ոչ միայն երկրի ներսում, էլեկտրոնային միջոցներից օգտվողների շնորհիվ, այլև սփյուռքի հաշվին: Ասել է, թե «տպագիր» մամուլը մեծացնում է ընթերցողների աշխարհագրությունը: Խնդիր է, սակայն, տպագիր մամուլի էլեկտրոնային տարբերակները ի վիճակի՞ են ամբողջովին փոխարինելու իրենց նախատիպին: Ինչ էլ լինի՝ տպագիր հրատարակությունների ճակատագիրը մնում է մտահոգիչ:

Զևավորվել են նաև զուտ էլեկտրոնային թերթեր: Սրանք նույնպես մրցակցության մեջ են տպագիրների հետ: Ինտերնետ ցանցով հեշտությամբ հայտնվում են ընթերցողի մոտ, ցանկության դեպքում տպիչի միջոցով կարող են կերպարանափոխվել տպագիրի: Թույլ հաղորդակցական ցանց ունեցող երկրներում, ինչպիսին է Հայաստանը, տպագիր թերթերի էլեկտրոնային տարբերակները, ոչ էլ զուտ էլեկտրոնայինները մամուլի հետ մրցակցության մեջ մտնել չեն կարող: Այնուամենայնիվ, սա անցումային շրջանի մտահոգություններից է:

Մեզանում տեղեկատվությունը անշահավետ բիզնես է (առայժմ): Չնայած դրան՝ բիզնեսմենները հաճույքով տեր են կանգնում լրատվամիջոցներին, հատկապես հեռուստատեսությանը: Նրանք հասկացել են, որ ԶԼՄ-ն վիթխարի ուժ է իշխանության հասնելու, իշխանության հետ հարաբերություններ կարգավորելու գործում, որն ավելի շահութաբեր է, քան կարող է ապահովել հեռուստաընկերությունը: Հեռահար հաշվարկը բիզնեսի հայացքն ուղղեց դեպի տեղեկատվական դաշտ՝ վերջինիս զրկելով «անկախության» սկզբնական տարիների հույսեր ներշնչող զարգացումներից: Լրատվամիջոցների մերձեցումը իշխանություններին դուռ է բացում էժանագին ժուռնալիստական հնարանքների առջև՝ ի վնաս պրոֆեսիոնալիզմի և մասնագիտական էթիկայի: Սա էլ անցման շրջանի ԶԼՄ-ի առանձնահատկություններից է:

ՀՀ-ում շուկան դեռևս ազատական չէ, քանի որ այստեղ տիրություն են անում իշխանավոր կամ իշխանամետ «մոնոպոլիստները»՝ գրեթե բացառելով ազատ մրցակցությունը: Սա իր հետևանքներն է դրսևորում տեղեկատվական շուկայում ևս. այստեղ նույնպես պետական ու մենատիրական գերիշխանությունն է, որը

բացառում է ազնիվ ու արդյունավետ մրցակցությունը՝ սրանից բխող բոլոր տխուր հետևանքներով:

Մոտավորապես 2000 թվից սկսած՝ տնտեսական հզորություն ունեցողները ակտիվորեն միջամտում են երկրի կյանքի բոլոր ոլորտներին, նաև ԶԼՄ-ի գործունեությանը՝ Ազգային ժողովում անձամբ, մյուս ոլորտների հետ լրատվամիջոցներին՝ միջնորդավորված ձևով: Այսինքն՝ զգալիորեն մոտեցել ենք «քաղաքակիրթ» կապիտալիզմի մոդելին:

Չնայած ձեռքբերումներին՝ անցման շրջանի մամուլը, մանավանդ 1995 թ. սկսած, կրկին ստանձնեց քաղաքական խոսափողի դեր և գնալով խորացավ այդ դերում: Արդի լրատվամիջոցների, մասնավորաբար տպագրականի ծայրահեղ քաղաքականացված լինելը, որ տնտեսական անազատության հետևանք է, անցման շրջանի այն դրսևորումներից է, որ խանգարում է ազատ մամուլի կայացմանը:

Անցումային շրջանի չլուծված խնդիրներից մեկը, որ լուրջ դժվարություններ է հարուցում, լրագրողների փոխհարաբերությունն է լրատվամիջոցի ղեկավարի հետ: Լրագրող-խմբագիր-սեփականատեր փոխհարաբերությունները չեն կարգավորվում «ԶԼ մասին» ՀՀ օրենքով: Այնուամենայնիվ, լրագրողի գործունեության անկախության կարևոր երաշխիք է օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված դրույթն այն մասին, որ արգելվում է որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրագրողի նկատմամբ: Այս արգելքը կոչված է լրագրողին պաշտպանելու ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին ճնշումներից: Լրագրողները կարող են հենվել այս դրույթի վրա այն բոլոր դեպքերում, երբ խմբագրի կամ սեփականատիրոջ կողմից փորձ է արվում ազդեցություն գործել իրենց նյութերի բովանդակության վրա:

Խնդիրն ավելի լուրջ ենթատեքստ է ստանում այն դեպքում, երբ լրագրողը համաձայնում է աշխատել որևէ լրատվամիջոցում՝ առանց պայմանագրային հարաբերությունների, այսինքն՝ աշխատում է առանց պայմանագրի և համապատասխան իրավական ձևակերպումների: Սրա հետևանքով լինում են դեպքեր (ինչպես պատահեց, օրինակ, 2004 թ. մայիսին՝ «Կենտրոն» հեռուստաընկերությունում), երբ իրենց ոչ ձեռնտու լրագրողին կամ լրագրողներին աշխատանքից ազատում են նույնիսկ առանց պատճառաբանված հրամանի և առանց կատարած աշխատանքի դիմաց վճարելու:

Քաղաքակիրթ աշխարհում, օրենքներից բացի և օրենքներից ավելի, հիշյալ փոխհարաբերությունները կարգավորվում են ժուռնալիստական էթիկայի «կոդեքսներով»: Մեզանում լրատվամիջոցները խուսափում են նման նորմեր ընդունելուց, այդպիսիք ունեն մի քանի ժուռնալիստական կազմակերպություններ (Երևանի մամուլի ակումբ, «Հետաքննող լրագրողների կազմակերպություն», Հայաստանի ժուռնալիստների միություն, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ): Լրատվամիջոցների իսկական(ստվերային) տերերին բոլորովին ձեռնտու չէ քաղաքակիրթ ժուռնալիստիկայի դաշտը: Էթիկական կանոնագրերի բացակայությունը արձակում է նրանց ձեռքերը խոսքի ազատությունը ամենաթողության հասցնելու համար: Բոլոր փորձերը լրատվամիջոցների ղեկավարների խոր-

հուրդ ստեղծելու ուղղությամբ, որն ինչ-որ կերպ կկարգավորեր լրագրողների գործունեության քաղաքակիրթ բնույթը, ձախողվում են:

Լրատվամիջոցների տերերի ու լրագրողների փոխհարաբերության կարգավորման կարևոր երաշխիք է լսարանը. անորակ արտադրանքի դեպքում մամուլի բիզնեսով զբաղվողը քիչ եկամուտներ կունենա: Տնտեսական այս լծակը, սակայն, մեզանում չի գործում, քանի որ լրատվությունը դեռևս լիարժեք ապրանք չի դարձել մեզանում: Նույնիսկ հեռուստաընկերությունները, որոնք հիմնականում գովազդի շնորհիվ են հասնում օգուտների, դեռևս լրջորեն չեն մտահոգվում լսարանի հետաքրքրքրություններով: Այն տպավորությունը կա, թե տպագիր մամուլի համար նման խնդիր գոյություն չունի անգամ, եթե անտեսենք սենսացիաներով սակավաթիվ ընթերցողներին լրատվամիջոցին «կապած պահելու» պրակտիկան: Ազատ մամուլի կայացման ճանապարհի լուրջ խոչընդոտներից է սա:

Մշակույթը թողնվել է շուկայական հարաբերությունների քմահաճույքին՝ պատճառաբանելով, թե գրականությունն ու մշակույթը պետք է իրենք իրենց պահեն: Կարող են լինել ոլորտներ, ոլորտներում՝ առանձին անհատներ, որ կարող են իրենց պահել: Բայց ամբողջության մեջ պետական հովանավորությունը անհրաժեշտ է: Նույնիսկ ինքնաֆինանսավորման հնարավորությունը պետք է կազմակերպվի պետական հովանավորությամբ: Եվ հետո՝ բացատրությունը, թե ամբողջատիրական պետությունը հովանավորում էր և տոտալիտար մշակույթ էր պահանջում, անհիմն է, որ կարելի է հերքել հակադրումով՝ անկախ պետությունն էլ թող հովանավորի և անկախ մշակույթ պահանջի:

АРМЯНСКИЕ СМИ В ПЕРЕХОДНЫЙ ПЕРИОД

АНАНЯН Г. Г.

Резюме

Глобализация средств массовой информации диктует свою логику не только процессу развития СМИ в странах, переживающих переходный период. В силу этого наряду с существенными различиями постсоветского и мирового информационного поля выявляется также их определенная общность. При таких условиях насущным становится изучение процесса развития взаимоотношений глобальных и местных СМИ.

Армянские СМИ претендуют быть названными свободными и независимыми, а между тем свобода часто подменяется вседозволенностью, которая способствует становлению независимой печати в той же степени, в какой цензура.